Հաստատված

«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԲԸ Տնօրենների խորհրդի

29.07.2024թ. № 290724 որոշմամբ

«ԹԵԼ-ՍԵԼ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Կարգավորման առարկան

1. «ԹԵԼ-ՍԵԼ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ ընկերություն) Շահակիցների հետ հարաբերությունների քաղաքականությունը (այսուհետ՝ քաղաքականություն) սահմանում է Շահակիցների հետ հարաբերությունների հիմնական սկզբունքները, ինչպես նաև Շահակիցների դասակարգումը:

2. Հիմանական հասկացություններ

2. Սույն փաստաթղթում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) Շահակից (Stakeholder)՝ ընկերության գործունեության մեջ հետաքրքրություն ունեցող անձ, որը կարող է ազդեցություն ունենալ Ընկերության վրա կամ որի վրա կարող է ազդել Ընկերությունը:

2) բովանդակություն՝ ներքին և արտաքին գործոնների ամբողջություն, որն ազդում է ընկերության նպատակների որոշման և իրականացման վրա:

3. Ընդհանուր դրույթներ

3. Ընկերությունը նպատակ է հետապնդում Շահակիցների հետ փոխշահավետ, երկարաժամկետ և կայուն հարաբերությունների հաստատման և պահպանման,

հիմնվելով փոխադարձ վստահության, ընկերության ստանձնած պարտավորությունների կատարման, թափանցիկության և ճկունության վրա:

4. Շահակիցների հետ համագործակցության հիմքում դրվում է փոխշահավետության և ընդհանուր նպատակների ստեղծման սկզբունքը: Նման մոտեցումը Շահակիցներին թույլ է տալիս ավելի լավ հասկանալ ընկերության քաղաքականությունը և դիրքորոշումը կարևոր հարցերի վերաբերյալ:

5. Շահակիցների հետ հարբերություններում ընկերությունը առաջնորդվում է հետևյալ սկզբունքներով՝

1) տեղեկատվական և ֆինանսական թափանցիկություն, արդյունավետ տեղեկատվական համագործակցություն.

2) կորպորատիվ էթիկայի պահպանում.

3) մարդու իրավունքների անվերապահ պահպանում և խտրականության բացառում.

4) Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարում:

4. Շահակիցների հետ հարաբերությունների նպատակը

6. Շահակիցներ հետ հարաբերություններում արտաքին բովանդակությունը պարզելու համար իրականացվում են հետևյալ գործողությունները՝

1) տեղեկատվության հավաքագրում ընկերության քաղաքականության որոշման համար.

2) նոր բիզնես հնարավորությունների որոնում, հանրային և էկոլոգիական հարցեի լուծման համար.

3) նոր Շահակիցների ներգրավվման փարձի ուսումնասիրություն և ներդրողների հնարավորությունների ընդլայնում.

4) Շահակիցների խնդիրների ավելի արդյունավետ և կայուն լուծումների առաջարկում:

7. Ընկերության հեղինակության ձևավորման և կառավարման նպատակով անհրաժեշտ է բարձրացնել ընկերության գործունեության թափանցիկություն:

8. Հնարավոր ռիսկերի զսպման նպատակով իրականացվում են հետևյալ գործողությունները՝

1) մինչև ռիսկերի առաջացումը հնարավոր կոնֆլիկտային իրավիճակների հայտնաբերում և կանխարգելում.

2) ընկերության նախատեսված գործընթացներից շեղումների հայտնաբերում և դրանց վերաբերյալ Շահակիցներին տեղեկացման գործիքների մշակում, հնարավոր բացասական հետևանքների նվազեցման համար.

3) ստեղծված հնարավորությունների առավել արդյունավետ օգտագործում:

5. Շահակիցների շրջանակը

9. Շահակիցներ շրջանակի որոշումը հանդիսանում է ընկերության բնականոն գործունեության բաղկացուցիչ մասը: Ընկերությունը տարեկան մեկ անգամ վերանայում է Շահակիցների ցանկը, գնահատելով առանձին Շահակիցների հնարավոր շահերը:

10. Շահակիցների շրջանակը որոշելիս ընկերությունը ղեկավարվում է հետևյալ սկզբունքներով՝

1) **կախվածություն՝** Շահակիցների խումբ կամ անձ, ով ուղղակի կամ անուղղակի կախված է ընկերության գործունեությունից, մատուցվող ծառայություններից կամ ընկերության այլ արդյունքներից.

2) **ազդեցություն՝** Շահակիցների խումբ կամ անձ, ով կարող ազդել ընկերության որոշումների կայացման վրա.

3) **լարվածություն՝** Շահակիցների խումբ կամ անձ, որոնց շահերի շրջանակը ավելի լայն է, մասնավորապես՝ ֆինանսական, հանրային և էկոլոգիական շահեր, որոնց անհրաժեշտ է ընկերության անհետաձգելի ուշադրությունը:

11. Շահակիցներին գնահատելիս հաշվի են առնվում փոխադարձ ազդեցությունը և շահերի համընկնումը, ինչպես նաև հարաբերություններում հնարավոր ռիսկերի առկայությունը:

12. Շահակիցների հետ փոխազդեցության մեթոդներն են՝

1) **տեղեկացում.** ընկերությունը հաճախակի և ժամանակին Շահակիցներին տրամադրում է օբյեկտիվ տեղեկատվություն, որպեսզի Շահակիցները բավականաչափ տեղեկացված լինեն ընկերության ընթացիկ գործունեությունից.

2) **խորհրդատվություն.** ընկերությունը հավաքագրում է Շահակիցների կարծիքներն ընկերության գործունեության վերաբերյալ՝ հարցումների միջոցով.

3) **ներգրավվում.** ընկերությունը համագործակցում է Շահակիցների հետ աշխատանքի յուրաքանչյուր փուլում, նպատակ ունենալով հավաստիանալ, որ Շահակիցների բոլոր ակնկալիքները հասկանալի են և հաշվի են առնվում.

4) **համագործակցություն.** ընկերությունը պատրաստ է համագործակցել Շահակիցների հետ որոշումների կայացման յուրաքանչյուր փուլում:

13. Ընկերությունը Շահակիցների հետ հարաբերություններում օգտագործում է հետևյալ հիմնական փոխազդեցություն ձևերը՝

1) անհատական և ընդհանուր հանդիպումներ.
2) ուղղակի կապ էլեկտրոնային փոստի և հեռախոսակապի միջոցով.
3) շնորհանդեսներ.
4) հարցումներ.
5) կորպորատիվ հաշվետվություններ.
6) պաշտոնական կայք.
7) հրապարակումներ լրատվամիջոցներում.
8) սոցիալական կայքեր:

14. Ընկերությունը առանձնացնում է Շահակիցների խմբերն՝ ըստ հետևյալ աղուսյակի, սակայն չի սահմանափակվում դրանով.

Շահակիցների խումբ	**Այդ թվում՝**
Բաժնետերեր և ներդրողներ	Ընկերության բաժնետերեր և ներդրողներ
Ֆինանսական համայնք	Վարկանիշային գործակալություններ, ֆինանսական ինստիտուտներ և կարգավորողներ, հնարավոր ներդրողներ
Բիզնես համայնք	Հնարավոր գործընկերներ, մասնագիտաման ասոցիացիաներ
Մատակարարներ	Գործող և հնարավոր մատակարարներ
Հաճախորդներ	ընկերության մատուցած ծառայություններից օգտվող և հնարավոր օգտվող անձինք
Աշխատակիցներ	Ընկերության աշխատակիցներ, ծառայությունների մատուցման

	պայմանագրի հիման վրա ընկերության հետ համագործակցող անձիք
Պետական մարմիններ	ՀՀ պետական մարմինների ներկայացուցիչներ
Տեղական ինքնակառավարման մարմիններ	ՏԻՄ ներկայացուցիչներ
Լրատվամիջոցներ	Թղթային և էլեկտրոնային լրատվամիջոցների ներկայացուցիչներ, բլոգերներ